

րոց դարձած աշխարհի զգացումն էր: Ընկալա-
տագրի բերումով հայերը իրենց անհատակա-
նությունը և ավանդույթները անձնական լինելի պա-
հելու համար ուղղակի և փոխաբերական նա-
հանջ կատարեցին դեպի իրենց ներքնաշխարհը: Ընդլսածագիրն ընդգծում է, որ Արշիլ Գորկին
ոչ միշտ էր վկայակոչում հայոց պատմության
իրողություններն իր գեղարվեստական համոզ-
մունքները լուսաբանելու նպատակով: Գեղագի-
տական հիմնական սկզբունքների շուրջ ծավալ-
ված Արշիլ Գորկու քննարկումները, ըստ Մ.
Պետրոսյանի, հաճախ շղարշված են ընդհան-
րություններով: Ինքնասպանությունից մեկ տա-
րի առաջ՝ 1947 թ. գրված մի նամակում, Ար-
շիլ Գորկին շարադրել է իր գաղափարները
մարդկային առաջագիծության մեջ՝ երևակայու-
թյան խաղացած դերի մասին և այն, թե ինչի

է ձգտում ինքը իր արվեստով: Ինչպես նշում
է հոդվածագիրը, ժամանակակիցների վկայու-
թյամբ, Արշիլ Գորկու խոսքը, վարվելաձևը,
ինչպես նաև իր արվեստը սեփում էին նրա մե-
կուսացվածության զգացումով: Արշիլ Գորկին
վերացարկման մեջ էր տեսնում ժամանակակից
աշխարհի հոգևոր լճացման պատճառներից մե-
կը: Միևնույն ժամանակ, Մ. Պետրոսյանի կար-
ծիքով, նշանակալից էր Արշիլ Գորկու մշակու-
թային, սեփական հայկական ակունքների գի-
տակցումը:

Հանդեսում լույս են տեսել Ք. Փոքսի, Ռ.
Թոմսոնի, Ս. Փառնի, Լ. Ավգոյանի, Դ. Քուլմ-
շյանի, Դ. Փալոնեի, Բ. Փուլիեի, է. Համփի,
Ա. Արսլանյանի, Հ. Ֆելյեի և այլոց գրախոսա-
կանները:

Պատմ. գիտ. դոկտոր է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

V. Nersessian, *Armenian Illuminated Gospel Books*, The British Library Board, London, 1987, 100 p., 65 ill.

Վ. ՆԵՐՍԵՍՅԱՆ, Հայկական նկարազարդ ավետարաններ, Բրիտանական գրադարանի վարչություն, Լոնդոն, 1987, 100 էջ, 65 նկար:

1987 թ. դեկտեմբերի 11-ից մինչև
1988 թ. մարտի 6-ը Լոնդոնի Բրիտանական
գրադարանում կազմակերպված էր ճշգրիտական
նկարազարդ ավետարաններ խորագիրը կրող
ցուցահանդես, որտեղ ներկայացված էին նույն
հաստատության սեփականությունը հանդիսացող
ընտիր ձևագրեր: Այդ առիթով Լոնդոնյան գրա-
դարանի տնօրինությունը Լիսաբոնի Գալուստ
կուլյակենյան հիմնարկության աջակցությամբ
լույս է ընծայել ճշգրիտական նկարազարդ ավե-
տարաններ գիրքը, որի հեղինակն է հայագետ
Վրեժ Ներսեսյանը: Բրիտանական գրադարանի
աշխատակից Վ. Ներսեսյանը հեղինակ է մի
շարք հոդվածների և գրքերի, որոնք վերաբե-
րում են հայ տպագիր գրքի պատմությանը,
թղթադրական շարժմանը և այլ խնդիրների: Նրա
ուսումնասիրությունների շարքում առանձնահա-
տուկ տեղ է գրավում Բրիտանական գրադարա-
նի հայկական ձեռագրերի, մանավանդ նկարա-
զարդ օրինակների հետազոտությունը: Գրչագիր
այդ գանձերին են նվիրված Վ. Ներսեսյանի
վերջին տարիների ծավալով ոչ մեծ հրապարա-
կումները:

Նոր գրքի առաջարկում հեղինակը համա-
ռոտ ու սպառիչ տեղեկություններ է տալիս
քրիստոնեության ստեղծած արվեստի, ավետա-
րանների նկարազարդման համակարգի, հայ ե-

կեղեցու և հայոց պատմության, Աստվածաշն-
չի հայերեն թարգմանության ու նաև հրատա-
րակության մասին: Բացի այդ, Վ. Ներսեսյանը
սեղմ կերպով անդրադառնում է հայկական
մանրանկարչության ակունքներին, հիշատակե-
լով VII դարի հեղինակ Վրթանես Քերթազի նը-
շանավոր ճշգրիտ պատկերամարտից բերելը,
որ խոսվում է հայկական եկեղեցիները զար-
դարող նկարաշարի մասին: Այստեղ գիտնակա-
նը տեսադաշտից դուրս չի թողնում և Աղթա-
մարի Ս. Խաչ եկեղեցու ներսը ձևավորող որմ-
նանկարները, որտեղ պահպանվել է դարերի
խորքից եկող ավանդական, հինավուրց պատ-
կերազրությունը: Առաջարկում հեղինակը գա-
ղափար է տալիս մեզ հասած հնագույն ման-
րանկարների վերաբերյալ, առաջին ամբողջո-
վին պահպանված նկարազարդ ձեռագրի՝ Մլթե
թագուհու 862 թ. Ավետարանի, մինչև X դա-
րի վերջը ընդօրինակված Ավետարանների նը-
կարաշարի թվաների, դրանց ձևավորման հայ-
կական եղանակի, հայկական եկեղեցու պատ-
մ. հուշարձանի վերաբերյալ:

Գրախոսվող գրքի Ձեռագրերը Բրիտանա-
կան գրադարանում վերնագրված ռաժինը
բացվում է կիլիկյան մանրանկարչության օրի-
նակների քննությամբ: Բրիտանական գրադա-
րանի կիլիկյան մատյանների կարգում հնագույն

Նմուշն է 1166 թ. Ավետարանը (Add. MS. 19727): Այն զարդարված է խորաններով, անվանաթերթերով և երկրաչափական լուսանցազարդերով: Կիրիկյան դրժարվեստի բնորոշ առանձնահատկությունները երևան են գալիս նաև 1181—1182 թթ. Դրաղարկում (Կիրիկիա) թորոս գրչի ընդօրինակած և խաչատուր քահանայի ծաղկած Ավետարանում (MS. Or. 81): Այստեղ կան ոչ միայն խորաններ, անվանաթերթեր, ավետարանիչների պատկերներ, այլև պատվիրատուի՝ Դրաղարկի վանքի առաջնորդ Սամուելի նկարը: Մատյանի էջերից մեկի մոխրակապտավուն շնչեր վրա նա ներկայացված է Քրիստոսին Ավետարանը մատուցելիս: XII դարի մյուս կիրիկյան մատյանների նման այստեղ ևս անվանաթերթերում բնագրի առաջին բառերը զրկված են ոսկով, կապույտ խորքի վրա: Այս մատյանի ձևավորումներում, ինչպես նկատել է Ս. Տեր-Ներսեսյանը, զգալի-խում է Բարձր Հայքի արևելյան աղիքը, այսինքն՝ առաջնային են հայկական ավանդական և ոչ թե նոր կիրիկյան սկզբունքները: Դրաղարկի ձեռագրի կարևորությունն ըստ ամենայնի ըմբռնելու համար անհրաժեշտ է հիշել, որ XII դարի կիրիկյան նկարազարդ օրինակները խիստ սակավաթիվ են և քիչ ուսումնասիրված:

Կիրիկյան մանրանկարչության բացառիկ նմուշներից է 1282 թ. Դրաղարկում Բարսեղ գրչի և Հովհաննես ծաղկողի համագործակցությամբ ստեղծված ձեռագիրը: Այս Ավետարանը մեկն է այն մատյաններից, որոնք հայտնի են թագավորական ձեռագրերի խումբը անունով, և որոնց մեջ կատարյալ գույնագործոց է համարվում Կեռան թագուհու՝ ներկայումս Երուսաղեմում պահվող Ավետարանը (1272 թ.): Դժբախտաբար, Վ. Ներսեսյանը չի նշում, որ հուշարձանը մասնաշաղկապանաճեղով գործում մեծ վնասով ունի հայ մշակույթի մեծ երախտավոր, անվանի գրող Ա. Զոպանյանը, որը նկարագրել և հրատարակել է ձեռագրի առանձին մանրանկարները թե՛ «Անահիտ» հանդեսում և թե՛ «Վարդաստան» Հայաստանի ժողովածուում:

1282 թ. գրչագիր հատորում Մատթեոս ավետարանի պատկերի տակ եղած մակագրությունից հայտնի է դառնում, որ այն վրձնել է Հովհաննեսը, իսկ ստեղծագործության ոճից զգացվում է, որ կարված է ավելի ուշ, քան կիրիկյան ձևավորումները: Հավանաբար սա Սանահնի վանքի գրիչ և ծաղկող Հովհաննեսի աշխատանքն է, որը, ըստ ուշ շրջանի հիշատակարանի, նորոգել է մատյանը:

XIII դարի վերջին, բայց ոչ Կիրիկիայում, այլ Հովհաննավանքի մոտ, Թեղենիկում երկու եղբայր գրիչների՝ Փահանայի և Շմավոնի համագործակցությամբ է ստեղծված Բրիտանական գրադարանի լավագույն ձեռագրերից մեկը: Այս Ավետարանը (MS. Or. 2283) գրված է 1295 թ. և ունի այնպիսի ինքնատիպ պատկերներ, ինչպիսին է Մարկոսի անվանաթերթը: Այստեղ նկատելի է խիստ հազվագյուտ մի մանրամասն. անվանաթերթի ճակատազարդում ներկայացված է ավետարանի խորհրդանշանը, որը սովորաբար տեղադրված են մեծատառի կողքին: Այդ առանձնահատկությամբ մերձենալով տարբեր հավաքածուների մի խումբ հայկական մատյանների, Թեղենիկի Ավետարանը պատկերացում է տալիս XIII դարում հին արևելյան ավանդույթներին հայ վարպետների հավատարիմ մնալու մասին:

Իր գեղարվեստական ու պատմական առանձնահատկություններով Բրիտանական գրադարանի ուշագրավ մատյաններից է 1200—1202 թթ. Երզնկայի մոտ գտնվող Ավագ վանքում վարդան գրչի ընդօրինակած Ավետարանը (MS. Or. 13654): Հետաքրքիր է, որ Վարդանին են վերագրվում նաև հայկական ամենամեծ գրքի՝ Մշո Ճառնատրի ընդօրինակությունը (1202—1204 թթ.): Հայտնի է Երզնկայի Ավետարանի ղեկավարման պատմությունը: Դարանաղյաց գավառից մի խումբ փախստական հայեր այն բերում են Կ. Պոլիս 1605 թ. և ունեն Սեթի ձեռքով մատյանը նվիրաբերվում է Ս. Նիկողայոս եկեղեցուն: XVIII դարից սկսած և մինչև մեր դարի սկիզբը ձեռագիրը պահվել է Կ. Պոլսի Հայոց ազգային մատենադարանի հավաքածուում (ձեռագիր № 6): 1911 և 1914 թթ. Գ. Հովսեփյանը մատյանը տեսել է Կ. Պոլսում, նկարագրել և լուսանկարել առանձին էջեր: Հետագայում ձեռագիրը վաճառվել են տարել ԱՄՆ և առաջարկել Վաշինգտոնի Ֆրիդրիկս պատկերասրահին: ԱՄՆ-ում Ավետարանը դարձել է նյութորոշարձակ Հակոբ Գևորգյանի սեփականությունը, որի մահից հետո այն, ի թիվս Գեվորգյանի մյուս մատյանների, աճուրդի է հանվել: Ձեռագիրը գնել է Բրիտանական գրադարանը: Անցյալում Երզնկայի Ավետարանի քննությամբ զբաղվել են Ա. Զոպանյանը Գ. Հովսեփյանը, իսկ վերջերս և Տ. Իզմայլովան (Լենինգրադ): Վերջինս նկատել է այս հուշարձանը և Մաշտոցի անվան Մատենադարանի 1160 թ. հարբերդի Ավետարանը մերձեցնող ընդհանրությունները, ինչպես նաև բյուզանդական ավելի հին շրջանի գրժարվեստի հետ Երզնկայի ձեռագրի ունեցած առնչությունները: Ըստ Տ. Իզմայլովայի, հարբերդի ու Ավագ վանքի համեմատվող մատյաններն իրենց նկա-

րազարդումներով զաղափար են տալիս XII դարի հայ մանրանկարչության ամենահետաքրքիր ուղղություններից մեկի մասին: Դժբախտաբար Ա. Զոպանյանի, Գ. Հովսեփյանի, Տ. Իզմայլովայի հրապարակումները անհայտ են մնացել Վ. Ներսեսյանին:

Բրիտանական գրադարանի նշանավոր հուշարձաններից է կիլիկյան թագավորության մայրաքաղաք Սսում 1280 թ. Ստեփանոս Վահկացու ընդօրինակած Ավետարանը (Add. MS. 18549): Ստեփանոս Վահկացին Հեթում I արքայի եղբոր՝ Հովհաննես արքեպիսկոպոսի դեկավարած Գոնբերի դպրոցի աշակերտներից մեկն էր: Այս ձեռագիրը դուրս է մնացել Վահկացու գործունեությանը նվիրված ուսումնասիրություններից, բայց, անշուշտ, արժեքավոր է անվանի գրչի և ծաղկողի ժառանգությունն ըստ ամենայնի հետազոտելու իմաստով: Այդ մատյանի ավետարանիչների դիմանկարները, Պողոսի և Պետրոսի պատկերը, Գործք Առաքելոցը ընդգրկող հատվածի լուսանցանկարները և այլ մանրանկարներ XVII դարում վրձնել է Նոր Զուղայում հաստատված Խիզանի դպրոցի ներշնչավոր վարպետներից Մեսրոպ ծաղկողը: Ձեռագրի երբեմնի տերն է եղել Հեթում I թագավորի եղբայր Օշինի որդին՝ Թորոսը, իսկ XVII դարում այն դարձել է Հին Զուղայի քաղաքացի խոջա Խաչիկի որդու՝ խոջա Նազարի սեփականությունը: Վերջինիս պատվերով 1618 թ. Մեսրոպ Խիզանցին նորոգել է մատյանը:

Հակոբ Գևորգյանի աճուրդում վաճառված ձեռագրերից Բրիտանական գրադարանում է հանդրավանել նաև կիլիկյան Լեոն II արքայի համար Ստեփանոս գրչի ընդօրինակած ժամագիրքը (MS. Or. 13993): Մատյանի ընդօրինակման ճշգրիտ տեղը և թվականը հայտնի չեն: Ժամանակին Ա. Սյուրմեյանը ձեռագրի մանրանկարները վերագրել է Բաբոս Ռոսլինին, որը փոքր-ինչ կասկածելի է:

Բրիտանական գրադարանում տարբեր ձեռագրահամարներով արձանագրված երկու մատյանները (MS. Or. 10960 և Add. MS. 18730), Վ. Ներսեսյանի կարծիքով, նույն ձեռագրի կիսված մասերն են: Նրկորդ կեսում թեև հիմնական հիշատակարանը շկա, բայց տեղ-տեղ հանդիպում է գրչի՝ Թորոս Վահկացու անունը: Այս պատահիկը Բրիտանական գրադարանը գնել է Բ. Բերքերից 1854 թ., իսկ 1928 թ. հաստատությունը ձեռք է բերել առաջին կեսը: Վերջինիս էջերից մեկում՝ հիշատակարանում, նշվում է, որ կիլիկյան Հեթում II արքան ձեռագիրը նվիրաբերել է Լամբրոնի տեր Օշին մարաշխատին: Մատյանի ձեռագրումները, որոնք բաղկացած են անվանաթերթերից, լուսանցանկարներից, զարդագրե-

րից և այլ մանրամասներից, աչքի են ընկնում կիլիկյան հրքարվեստին հատուկ նրբազնորությամբ:

1321 թ. Գլաձորի Ավետարանը (Add. MS. 15411) XIV դարի փառաբանված վարպետ Թորոս Տարոնացու լավագույն աշխատանքներից է: Մատյանի ընդօրինակողն է Կորյուն գրիչը: Այս ձեռագրի նկարազարդումների ոճը բացահայտում է մանրանկարչի քնարական ու փոքրինչ մելամաղձոտ ներաշխարհը: Այդ իմաստով՝ հատկապես ուշագրավ են Մարկոսի բնագրի սկզբի ծաղկազարդ էջերը: Այստեղ անվանաթերթի երեք մեծատառ զարդարված է շուրս ավետարանիչների խորհրդանշաններով: Հետաքրքիր են նաև մյուս զարդագրերը: Յուրաքանչյուր բնագրի առաջին տողը ծաղկված է թռչնազրերով: Մարկոսի անվանաթերթի վերջում պատկերված է Մարիամը մանկանը կերակրելիս, իսկ կողքից երևում են մերկացրած սրերով հրեշտակները:

Գլաձորի մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչներից է նաև Ավագը: Բրիտանական գրադարանում գտնվող Ավագի անթվակիր մատյանը (MS. Or. 5304), զժրախտաբար, մեզ է հասել շատ վատ պահպանված վիճակով: Թեև Ավագը սովորել է Գլաձորի համալսարանում, բայց նրա մանրանկարներում զգացվում է կիլիկյան գրքարվեստի, մանավանդ Թորոս Ռոսլինի ազդեցությունը: Վերջինիս նման նաև շատ մանրամասն է նկարազարդում Ավետարանը, ուշադրություն հատկացնելով անկախորդ թվացող դրվագներին, օգտագործելով և՛ ողջ էջը, և՛ լուսանցանքները: Խնդրո առարկա մատյանում կան ավելի քան հիսուն մանրանկարներ, որոնք շատ կարևոր են Ավագի վաստակը ըստ ամենայնի ուսումնասիրելու տեսանկյունից: Ավագի գործունեությունն ընդգրկում է 1329—1358 թթ. միջև ընկած ժամանակագրահատվածը: Ավագի մահից հետո նրա արվեստը դարձրեց Բրիտանական գրադարանը և աղբյուր է ծառայել Վասսուրականի և այլ վայրերի հայ վարպետների համար:

Բրիտանական գրադարանում մի քանի արժեքավոր ձեռագրերով է ներկայացված Վասսուրականի մանրանկարչությունը: Դրանցից առաջինը ընդօրինակված է 1281 թ. Արճեշում (MS. Or. 2679): 1553 թ. ունի Դավթի կողմից այն պահ է տրվել Ուսհայի Ս. Աստվածածին եկեղեցուն, որից հետո, դատելով 1866 թ. կնիքից, եղել է տեղի թաղական խորհրդի սեփականությունը: 1883 թ. Բրիտանական գրադարանը ձեռք է բերել մատյանը Ս. Պարոնյանից, նույն կնիքը կրող մի քանի ուրիշ ձեռագրերի հետ:

Նույն վասպուրականյան ոճով է և 1317 թ. Աստվածատուր գրչի ընդօրինակած Ավետարանի (MS. Or. 2680) մանրանկարությունը:

Իր պահպանողական նկարագրով է աչքի ընկնում իսլավում 1541 թ. Կարապետ գրչի կատարած Ավետարանի (MS. Or. 2707) պատկերների շարքը:

Վառա լճից հարավ գտնվող խիղան քաղաքի մանրանկարչական դպրոցի փառաբանված վարպետ Մարտիրոս խիզանցու աշխատանքներին Բրիտանական գրադարանում է պահվում մի Ավետարան (MS. Or. 82), որը զարդարված է խորաններով, անվանաթերթերով, ավետարանիչների դիմանկարներով և լուսանցազարդերով: Մարտիրոս խիզանցին ապրել է XVI դարի վերջին և XVII դարի սկզբին: Նա ունեցել է շատ աշակերտներ, որոնք թվում է եղել և Մեսրոպ խիզանցին: Բրիտանական հավաքածուում կա վերջինիս վրձնած ևս մի ձեռագիր՝ 1608 թ. Նոր Զուգայում խոջա Վելիշանի և նրա տիկնոջ՝ Գայանեի համար Ստեփանոս գրչի ընդօրինակած Ավետարանը (MS. Or. 5737): Մատյանի անվանաթերթերում և ավետարանիչների պատկերներում Մեծորոպը կրկնում է իր ուսուցչից՝ Մարտիրոս խիզանցուց ժառանգած ձևերը: Շահ Արասի կազմակերպած բռնագաղթի պատճառով Պարսկաստանում հայտնված Մեսրոպ խիզանցին իր ձեռագրում ցավով հիշատակագրում է տեղահանված հայերին բաժին ընկած փորձությունները:

Վ. Ներսեսյանի գրքում քննության են առնվում նաև մի քանի ուրիշ ձեռագրեր, որոնք ստեղծված են Նոր Զուգայում XVII դարի երկրորդ կեսին և, ինչպես նախորդ դեպքերում, բնորոշվում են մատյանների մանրանկարչության գեղարվեստական առանձնահատկություններն ու արժեքը: XVII դարի վերջի հուշարձաններից հեղինակը անդրադառնում է նաև 1695 թ. Կ. Պալսում խաչատուր դպիրի ընդօրինակած Ավետարանին, որը ծաղկել է Մարկոս Պատկերահանի որդին՝ Գարիբեդը: Այս ժամանակաշրջանի Ավետարաններից Բրիտանական գրադարանի լավագույն օրինակն է համարվում Կաֆայում (Ղրիմ) 1658 թ. Նիկողայոս Մաղկարարի կամ Մելանավորի գրած և պատկերազարդած մատյանը (MS. Or. 13895): Այս ընտիր ձեռագրի հեղինակը Ղրիմի մանրանկարչական դպրոցի գլխավոր ներկայացուցիչներից է և գործել է

1640 թ. մինչև իր մահը՝ 1693 թ.: Նրանից մեզ են հասել շուրջ երեսուներորս գրադիր հատորներ, որոնք ստեղծված են Կաֆայի (Բեռդուսիա) Ս. Սարգիս եկեղեցում, ինչպես նաև Սուրխաթում: 1658 թ. Ավետարանի մանրանկարչությունը աչքի է ընկնում սքանչելի որակով, առինքնող գույներով և նրբագեղ զծանկարով:

Եզրափակելով իր ուսումնասիրությունը, Վ. Ներսեսյանը առանձնահատուկ անդրադառնում է հայկական ավետարանները ձևավորելու եղանակներին, զանազան դպրոցներում իշխող ուժերին, դասական ու բյուզանդական արվեստներից եկող երևույթներին:

«Բրիտանական գրադարանի հայկական ձեռագրերի հավաքածուի համառոտ պատմությունը» վերնագրված բաժնում Վ. Ներսեսյանը գրում է, որ հաստատության մատյանների հիմնական մասը ձեռք է բերվել դեռևս XVI—XVII և հետագա դարերում ապրած անգլիական բարձրաշխարհիկ ազնվականության առանձին ներկայացուցիչների մասնավոր հավաքածուներից: XIX դարում գրադարանը ձեռագրեր է գրել Ս. Պարոնյանից, Բաֆթու ժառանգներից, իսկ XX դարում արևելագետ Ա. Զ. Էլլիսից և հնահավաք Հ. Գևորգյանի հավաքածուի աճուրդներից:

Գրքի վերջում Վ. Ներսեսյանը զետեղել է Բրիտանական գրադարանի հայկական մատյանների մասին եղած գրականության ցանկը, ապա մանրանկարների 24 գունավոր վերատպություններ՝ նկարագրությամբ հանդերձ: Սև ու սպիտակ 33 լուսանկարների հետ վերջիններս առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դնում մինչ այդ երբեք չտպված բազմաթիվ պատկերներ:

Գիրքը եզրափակվում է երեք հավելվածներով, որոնք ժամանակագրական կարգով ներկայացնում են քննված ավետարանները, դրանց լուսանցանկարների թեմատիկ վերլուծությունը, ինչպես նաև ողջ էջը զբաղող պատկերների համաձայնական տախտակը:

Վ. Ներսեսյանի այս գիրքը կարևոր քայլ է Բրիտանական գրադարանի հայկական ձեռագրերը ուսումնասիրելու ճանապարհին և արժեքավոր ներդրում հայ գրքարվեստի քննության ասպարեզում:

Լ. Բ. ՉՈՒԳԱՍՅԱՆ